ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎՍ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ՄԻ «ՏՆՕՐԻՆՈՒՄ»

ԳԱՐԵԳԻՆ Բ.-ԻՆ՝
ԻՆՁ «ԿԱՐԳԱԼՈՒԾ» ՀՌՉԱԿԵԼՈՒ ԱՌԹԻՎ

Ո՛չ Ձեզանից կարգ ստանալն է պատիվ,
և ոչ էլ կարգալույծ լինելը՝ անպատվություն:

Դուք կարծում եք կարգալույծ անելը Ձեր զորությունն է,
մինչդեռ դա Ձեր ամենամեծ տկարությո՛ւնն է:

Նկատի ունենալով, որ կարգալույծ անելու սույն տնօրինումը եկեղեցական, վարդապետական, ծիսական, կանոնական և կարգապահական ոչ մեկ հիմք չունի, այլ արդյունքն է ընդամենը կաթողիկոսին վստահված իշխանության չարաշահմանը, կարգալուծման սույն որոշումը հայտարարում եմ անարդար, անընդունելի և ապօրինի:

Տ. Աբել Քհն. Մանուկյան
Ժնև, 2 Հունիս 2011